

# ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 30 ՅՈՒՆԻՍ 1906, ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

## ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Անցած շաբթու «վերջին լուր» խորագրով ծանուցած էինք թէ նորընտիր երեսփոխաններէն տասը հոգի հրաժարած են Բարեբախտաբար յետոյ սառագեցինք որ միայն հինգ հոգի թէև հրաժարական մատուցած են, բայց իրենց պաշտօնակիցներու ստիպման վրայ ևս առած և խոստացած են իրենց պաշտօնը շարունակել:

Ուրախ ենք որ վերջին օրերս ծագած ցաւալի թիւրիմացութիւնները այս կերպով կը լուծուին և այնքա՞ն պաքարներով ու ջանքերով ի գլուխ ելած գործ մը չքայքայուիր, ինչպէս պահ մը կարծեցինք:

## ՊՕՂՈՍԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ի՞նչ պիտի ըլլայ Պօղոսեան վարժարանի վիճակը, դարձեալ ապիկարներու ձեռք պիտի ձգուի, տարի՞ մըն ալ խեղճ սղաքը պարապ պիտի անցնեն և հինգ վեց տարուան մէջ հազիւ սորված հայերէն պարզ ընթերցանութի՞ւնն ալ պիտի մոռնան, տարի՞ մըն ալ

1500 անգղ. ոսկիի գումար մը ծովը պիտի նետենք:

Ահա՛ հարցումներ որոնք ամէն կողմէ կը լսուին և որոնց պատասխանը ոչ ոք կրնայ տալ:

Աւագերջի քննութիւնները, եթէ կարելի էր քննութիւն անունը տալ այդ խեղկատակութեան, անգամ մըն ալ ժողովուրդին առջև պարզեցին վարժարանի ամսնադրման Վիճակը, անգամ մըն ալ սոյս տուին որ դասատուներու մնծամասնութիւնը անսրժան է իր պաշտօնին և թէ դպրոցը տարուէ տարի հսկայաքայլ յետադիմելու վրայ է:

Սահմանադրական պայքարը բոլորովին անօգուտ և թափուած ջանքերը ընդունայն պիտի մնան եթէ չծառայեն վարժարանը բարեկարգելու, զայն ապահանող ցեցերէն մաքրելու:

Օրինաւոր վարչութիւնը երբ պաշտօնի գլուխ անցնի, իր առաջին գործը պէտք է ըլլայ վարժարանին խնդիրը, Այս կը պահանջէ իրմէն ժողովուրդը:

## ՀԱՇՒԻ ՄԸ

Գիտէ՞ք Պօղոսեան վարժարանի տղաքը տարուան 365 օրերուն մէջ քանի օր դպրոց կ'երթան. հազիւ 150 օր...

Կը զարմանա՞ք, տեսէ՞ք հաշիւը:

Տարեկան արձակուրդ՝ 90 օր, կիրակիները՝ 52 օր, հինգշաբթի կէս օր միայն՝ 26 օր, Ծընունդի և Զատիկի արձակուրդ՝ 16 օր, զանազան տօներ՝ 24 օր, քննութեանց առթիւ դասերու դադարում 8 օր, գումար՝ 215 օր, զորս

զեղջելով տարուան 365 օրերէն, կ'ունենանք մի-  
այն 150 օր:

Եւ ահա՛ ուսուցիչները միմիայն հինգ ա-  
միս աշխատելով 12 ամսուան վարձք կը ստա-  
նան: Գոնէ՛ ի փոխարէն քիչ մը բան սորվեցու-  
նէին խեղճ տղոց. հայհոյութենէ, անառակու-  
թենէ և անբարոյականութենէ դուրս քիչ մը  
բան:

### ՕՐԱԹԵՆՈՒ ԸՆԴ ՊԷՏՔԸ

Յորմէյիտէ «Լրարեր» օրաթերթը հաւկթաւաճա-  
ռի խանութի մը վերածուեցաւ, հե ի հե քաղաքակա-  
նութեան ընթացքին հետեոյ Ալեքսանդրիոյ հայու-  
թիւնը կորսնցուց իր ուղեցոյցը և այժմ շատեր այն  
աստիճան խոր տգիտութեան մը մէջ մնացած են վէ-  
նէյուէլլայի կայութեան, Թէո-Նէօլի ձկնորսական  
խնդրին, Սիամի քաղաքական նոր ուղղութեան և այլ  
յարակից հարցերու մասին որ շատ անգամ ամենազա-  
ւալի թիւրիմալութիւններ տեղի կ'ունենան այն սըր-  
ճարաններու մէջ ուր ընդհանրապէս օրուան քաղա-  
քականութիւնը կը քննադատուի:

Իրա՛ւ է որ շարքեր անգամ մը «Բարակալօն»  
ընդհանուր կազմութիւնը կը պարզէ քաղաքագէտներու  
աչքին զօնաւոր մեծ պատկերով մը, բայց նոյնիսկ  
այդ պատկերը այժմ սկսած է մոլորութեանց առաջ-  
նորցելու շատերը, որովհետեւ «Լրարեր» շաբաթուան  
քաղաքականութիւնը ծանօթացնելով կը դիւրացնէր  
«Բարակալօն»ի պատկերին մեկնութիւնը, մինչդեռ հի-  
մակ առանց այդ անհրաժեշտ ծանօթութեան քաղա-

քականութեան հետևողները՝ չեն կրնար ըմբռնել թէ ինչո՞ւ արջը կռնակը զարձուցեր է, ինչո՞ւ ինկիլիզը խոշոր տակառի մը վրայ նստած նէմցէին զխոռն կը նետէ իր բիրան, մինչդեռ Ֆրանսըզը Թալիանին բէ- շէն կը քաշէ, Տաճիկը ինչո՞ւ մօրուքը բռնած կը մտա- ծէ, ինչո՞ւ Մակեդոնիան կը պարէ ու կրետէն ոտքե- րը վեր՝ եր՛ջու ձևոքերուն վրայ կեցած մարմնամարզի փորձեր կ'ընէ... ինչո՞ւ, ինչո՞ւ:

Ո՞վ պիտի տայ այս ամենուն պատասխանը, ո՞վ պիտի տեղեկացնէ Ալեքսանդրիոյ ուղեկորոյս հայու- թիւնը օրուան քաղաքականութեան մասին ու խոռով- եալ միտքերուն հանդարտութիւն պարգևէ:

--Օրաթերթ մը, միմիայն քաղաքական, ազգային և տեղական լուրեր տուող օրաթերթ մը, կ'ազազակէ Ալեքսանդրիոյ հայութիւնը, և այս ազազակը կը տա- րածուի մինչև Գաճիրէ ու աւելի հեռուն, բոլոր այն հեռաւոր անկիւնները ուր հայ գաղութ մը, ուր միակ Հայ մը կը գտնուի, որովհետև ամէնէն հեռաւոր ան- կիւնին միակ Հայն իսկ, զոր թէև ճանչնալու բախար չունինք, վստահ ենք որ իր քունն ու ախորժակը չը պիտի գտնէ մինչև որ օրը օրին չիմանայ թէ Գեր- մանիոյ կայսրը Աւստրիոյ կայսեր հետ ի՞նչ խօսած է, թէ ի՞նչ ջուրի մէջ է Ծայրագոյն Արևելքի կայու- թիւնը, թէ Գամպօծի թագաւորը ինչո՞ւ Ֆրանսոս և- կաւ և ուրիշ այս կարգի կենսական հարցեր:

Արդ, մենք այսօրէն իսկ կը յայտարարենք որ լուրջ նկատողութեան առած ենք եզրպատահայ գաղու- թը քաղաքականութեան ուղիղ ճամբուն վրայ դնելու խնդիրը և այս մասին մեր խորհուրդները կը խոս- տանանք յառաջիկայ թիւով աւելի լրջօրէն պար- զելու:

## ՀԱՆԴԷՍ ՄՐ

Ինչպէս յայտնի է Սահմանադրութեան հանդէսին խորհուրդը բաղադրվին վիժեցաւ Հիմակ կը լսենք թէ ուրիշ հանդէս մը պիտի կատարուի մօտերս. նորօրինակ և խիստ աւուր պատշաճի հանդէս մը. այն է՝ Սահմանադրութեան թաղման հանդէսը:

Մեր քաղաք մասնաւոր տեղեկութեանց համամատ վսեմ. Բարթող փաշա 200 սակի նուիրած է այս հանդէսի ծախքերուն համար:

Հանդէսը կազմակերպելու համար գործադիր յանձնախումբ մը ընտրուած է հետեւեալ անձերէ.

Վսեմ. Բարթող փաշա՝ նախագահ՝

Տ. Յ. Ուզուրեան՝ գանձապետ

Ս. Մ. Թելեան՝ քարտուղար

Հանդէսը տեղի պիտի ունենայ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին շրջաքաղեր. Հո՛ն, փայտէ քուէտուփը սեւ ներկուած և սեւ շղարջներով ծածկուած, պարտէզին մէջտեղը մեծ սեղանի մը վրայ պիտի դրուի ն հանդիսաւոր կերպով բացուելով Սահմանադրութեան գիրքը մէջը պիտի զետեղուի և սեւ կնքամոմով անտուկը պիտի կնքուի: Յետոյ Տ. Սմբատ Բիւրատ սեւ բըտէնկօթ մը հագած, եպիսոսէ շինուած բեմի մը վըրայ պիտի ելլէ ու Սահմանադրութեան դամբանականը պիտի խօսի:

Այս սրտայոյզ արարողութենէն ետքը, սուգի առարկաները մէջտեղէն պիտի վերցուին, երաժշտութիւնը պիտի սկսի. հանդէսը պարի մը պիտի փոխուի, ճօխ պիւֆէ մը հրաւիրեալներու տրամադրութեան տակ պիտի դրուի և խօլ զուարթութիւն մը պիտի սաւառնի հանդէսին վրայ մինչև առաւօտ:

ՅԻՄԱՆՔՕ-ԹԻՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գտհիբէի մեր պատերազմական մասնաւոր թըզ-  
թաւիցը հետեւեալը կը գրէ մեզ շաբաթ գիշերուան  
պատերազմին մասին.

«Պրանքօ-Թըքական պատերազմը շտաբ գիշեր  
տեղի ունեցաւ Վերտի թատրոնին մէջ ի ներկայու-  
թեան խումբ բազմութեան մը: Ներկայացումը խիստ  
յաջող անցաւ եւ ամաթէօն գերասաններուն համար  
կարելի է ըսել որ անյուսալի յաղթանակ մը եղաւ:  
Ինչպէս յայտնի է, խաղը կը արուէր ի նպաստ Կով-  
կասի հայ արկածեալներուն եւ շատ ուրախ եմ ծա-  
նուցանելու որ մօտաւորապէս ութսուն ոսկիի շափ  
զուտ հասոյթ գոյացած է սոյն ներկայացումէն: Իսկ  
խաղին գտած ընդունելութիւնը անկարագրելի է: Ա-  
ռաջին արարուածէն մինչեւ երրորդ արարուածին  
վերջին տեսարանը անվերջանալի քահքահներու տա-  
րափ մը անընդհատ տեղաց արահին մէջ: Շատ տիկիւն-  
ներ ստիպուեցան քօրսէնին թուլնել կամ բոլորովին  
հանել ազատօրէն եւ լիաթոք խնդալու համար: Գեր  
էրիկմարդոց բաճկոնի կոճակները խնդուքի ուժգնու-  
թենէն ըրգան եւ շատերու ծիծաղին հուրքը մարելու  
համար կարգադիր մասնախումբը պարտաւորուեցաւ  
չիշերով լիմոնատ եւ այլ զովայուցիչ ըմպելիներ ըս-  
պառել:

Բարեբախտաբար կատակերգութեան հեղինակնե-  
րը, Տ. Ե. Օտեան եւ Մ. Կիւրճեան խոհեմաբար չէին  
եկած ներկայացման, եթէ ոչ շատ հաւանական է որ  
ներկաները իրենց խանդավառութեան սահման մը չը  
կրնալով դնել պատճառ ըլլային ցաւալի միջադէպի մը:  
Կը լսենք թէ մտադրութիւն կայ, սակէ ամիս մը

ևտըը, կրկին ներկայացնել Ֆրանքո-Թրքական պատերազմը, ուրիշ բարենպաստի գործի մը համար:»

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՏԻ

Մեր պատասխանատու խմբագիրը Ե. Օտեան, որ շարաթէ մը ի վեր Պարոս (Ռամլէ) կը գտնուի, օգափոխութեան նպատակով (խոսովեալ մտքերը հանդարտեցնելու համար ըսենք անմիջապէս թէ առանց որ եւ է մահացու հիւանդութենէ մը վարակեալ ըլլալու) հետեւեալ հեռագիրը ուղղած է մեզ՝ հինգշաբթի՝ կէս գիշերը երկու ժամ անցած.

«Վեց զրուշ երեսուն փարա ողջ կը նուիրեմ «Ազատ Սօսք»ին»

Շնորհակալութեամբ արձանագրելով հանգերձ մեր համակրելի խմբագրին նուէրը՝ պարտք կը զգանք զիտել տալ իրեն որ չէր արժեր այդպիսի գումարի մը համար խանդարել պարկեշտ քաղաքացիներու հանգարտիկ քունը :

Տ. Բարսեղ Օհանեանը կապկելու իր այս ձեւը, ըստ մեզ, բոլորովին ծիծաղելի կը գտնենք:

### ԾԵՐԱԿՈՅՏԸ

Ալեքսանդրիոյ փորձառու և տարիքոտ անձնաւորութիւնները նկատելով որ մեր նորընտիր Երեսփոխանական ժողովը անփորձ երիտասարդներու շնորհիւ խիստ վտանգուած դրութեան մը մէջ կը գտնուի, նախնական դումարում մը

ըրած են ծերակուտական ժողով մը կազմելու համար :

Առաջին նիստը ամենայն կարգապահութեամբ տեղի ունեցած է և հեռուեալ ինը անձերը Մերակոյտի անդամ՝ ընտրուած են :

Տխար Յակոբ աղա Իզմիրլեան

- » Անտօն Արթինօֆ
- » Գրիգոր ձեզաշիրձեան
- » Սերգիս Ապրօ Սերգիսեան
- » Մանուէլ Չպուքճեան
- » Անթինոս Քիւլահեան
- » Սերոբէ Սերոբեան
- » Արիս Սիրաբեան
- » Յովակիմ Գալֆա Մէնզիլեան

Սոյն պատկասելի անձնաւորութիւնները որոնց տարիքին գումարը 960ի կը հասնի, որոշած են իրենց երկարամեայ փորձառութիւնը գործածել չէզոքացնելու համար նորածին Երեսփոխանական ժողովի անդամներուն գործած կարգ մը սխալանքները :

Սահմանադրութիւնը թէև ծերակուտական ժողովի մասին որ և է արամագրութիւն չունի, բայց վերոյիշեալ անձնաւորութիւնները Սահմանադրութենէն շատ աւելի հին ըլլալով պէտք չունին հպատակելու իրենցմէ երիտասարդ օրէնքի մը Գոնէ այս է կարծիքը Տ. Մ. Թելեանի, որուն փաստաբանական հանգամանքը այս պատագային մեծ կշիռ մը կուտայ Օրինաւորութեան ինդրի մը մասին յայտնած կարծիքներուն :

ՇԱՊԻԿԻ ԽՆԴԻՐԸ

Հետեւեալ ծանրակշիռ իրողութիւնը որուն կենսական կարեորութիւնը ոչ ոքի աչքէն կըրնայ վրիպիլ, ստոյգ ազբիւրէ մը մեզի հազորգուած է և զոր կը հրատարակենք յանուն այն անկողմնակալութեան որ քանիցս երեցած է այս էջերուն մէջ :

«Մովսէս մարգարէին օրերէն սկսելով մինչև Ազաւնունի վարդապետին ժամանակները, ամէն ժողովորդներու մէջ սովորութիւն եղած է «երկրպագութիւն»ը: Մարդկութիւնը, դարերէ ի վեր, զիտակցարար կամ անգիտակցարար երկրպագելով կ'անցընէ իր ժամանակը: Ոմանք Մամոնայի կ'երկրպագեն, ոմանք Աստուծոյ, ոմանք սատանային և. ոմանք ալ կանանց, կան շատեր ալ որ Ս. Գէորգի կ'երկրպագեն, երբ անգղիական սոկիի վրայ տեսնեն զինքը:

Երկրպագութեան այս տիեզերական սովորութիւնը ինչպէս յայտնի է Ալեքսանդրիոյ Պողոսեան վարժարանի մէջ մասնաւոր ուշադրութեամբ դաս կը տրուի:

Մեր տեսածին եւ ուսումնասիրածին նայելով՝ Զէյթունցի ծերուկ պատուելին աւելի լաւ մեթոտով երկրպագութեան դասը սորվեցնելու համար առանց չապիկի տղաքը իր դէմ կը կեցնէ ու երկրպագել կ'ուսայ, ընդ հովանաւորութեամբ աւազերէջ քահանային եւ ընդ հսկողութեամբ վարժարանի բարեհամբակ տընօրէնին :

Դպրապետը՝ տեսնելով որ շատ անգամ տղաքնւրէն մէկը առանց չապիկի իրեն պատուիրուած պարտականութիւնը կը կատարէ, սոսկալի կասկած մը կ'ունենայ :

—Արդեօք շապիկները պակաս են որ այս տէր  
չունեցող որքը առանց շապիկի կը մնայ, կը խորհի  
ինքնիրեն :

Եւ միանգամ ընդմիջտ խիղճը հանգստեցնելու  
համար, հաստատ տ. վճարական քայլերով կ'ուզողուի  
շահարան ուր շլաղած աչքերով կը տեսնէ շապիկնե-  
րու առատութիւն մը :

Յէն ատեն առանց իր պաշարիւնութիւնը կոր-  
ածնյնելու, կը կանչէ շապիկազուրկ տղան և շապիկ կը  
հագցնէ անոր :

Աւագերէզ քահագան ինչո՞ւ չգիտնալ կը ձեռաց-  
նէ այս ծանրակշիռ պարագան։ Անզի համար անլու-  
ծելի հանելուկ մըն է :

## ՀԱՅ ՍԱՐՄԷՅ ՄԸ

Չորեքշաբթի, 20 յունիսէն ի վեր «Ազատ Քեան»  
խատերական քննադատ մը ունի։ Այդ քննադատը «Օ-  
մէնթօ» իտալահնչիւն անուան տակ հայ Սարսէյ մը  
ըլլալ կը թուի, գատելով զինքը իր առաջին խատե-  
րական քրոնիկէն :

Ահաւասիկ սոյն քրոնիկին սկզբնաւորութիւնը.

«Ճրանքօ-թ՛րքական պատերազմը որ անցեալ գի-  
շեր ներկայացուեցաւ ի նպատակով կասի արկածելոց,  
արդէն ժամանակին բաւական նիւթ մատակարարած  
է քննադատութեան, հետեւաբար մենք աւելորդ կը  
նկատենք թատերախաղին վրայ խօսիլ հոս, միայն կը  
յիշեցնենք կատակերգութեան հեղինակներուն անուն-  
ները, Միքայէլ Կիւրճեան և Երուանդ Օտեսն, որոնք  
իրար գտած են Ազգաբանորից մէջ եւ կը յուսանք եւ  
կը սպասենք ալ իրենցմէ որ այս ամառ մեզի նորէն  
Ճրանքօ-թ՛րքական պատերազմի պէս անմեղ և ծիծաղ-

կոտ ու բնմի աւելի յարմար հեղինակութիւններ տան, որովհետեւ անոնց ծիծաղին շատ պէտք ունինք երբ լայցած էինք... Ազգասի թատրերգութեան վրայ»

Այս վարդերու տարափին սակ կ'ընդնչմարէ՛ք ծածկուած փուշերը:

Նախ մեր կատակերգութիւնը «արգէն ժամանակին բաւական նիւթ մատակարարած է եզեր քննագատութեան» Ո՞ր ժամանակին եւ ի՞նչ քննադատութիւն... այս մասին բան մը չբսկ մ'ը Օթէլլօն, մեզա՛յ, մեր Օմէնթօն: Ֆրանքո-Թրքական պատերազմին վրայ միայն խօսած է «Ազատ Բեմ»ի մէջ Տ. Որհրան Տամատեան եւ այն ալ ո՛չ թէ քննադատական ոգով, այլ չափազանց ներբողալից կերպով մը, իրմէ զատ ո՛չ ոք հրապարակաւ քննադատած կամ գնահատած է մեր թատերախաղը, հետեւորար չենք հասկնար թէ ինչպէ՛ս ժամանակին բաւական նիւթ մատակարարած կրնայ ըլլալ քննադատութեան:

Տ. Օմէնթօ այդ երեւակայական քննադատութեանց պատճառաւ աւելորդ նկատած է թատերախաղին վերայ կրկին խօսիլ, անշուշտ հեղինակները նորանոր ստորնացումներու չենթարկելու բարի նպատակով:

Շնորհակալութի՛ւն Օմէնթօյին իր շանթերը խնայած ըլլալուն համար մեզի:

Պ. քննադատը յետոյ մենէ կը յուսայ ու կը սպասէ Ֆրանքո-Թրքական պատերազմի նման ուրիշ թատրերգութիւն մը, սակայն պայմանաւ որ «բեմի աւելի յարմար» ըլլայ:

Որչա՛փ մեծ պիտի ըլլար մեր երախտագիտութեան հասակը, եթէ «Ազատ Բեմ»ի թատերական քննադատը մատնանիչ ընէր Ֆրանքո-Թրքական ին բեյական անյարմարութիւնները, կամ գոնէ «յաղագս

բնական յարմարութեանց» ուսումնասիրութիւն մը պարզեր մազ, ուրիշ կարենայինք սորվիլ թատերագրական արուեստին Ալֆան ու Օմեղան որուն ագահ ու նախանձոտ աւանդագահը բլալ կը թուի երկու գրօնիբու մէջ բանտարկուած Մէնթը:

Բայց... անցնինք, ինչպէս կը գրէ այնքան սրամտորէն պ. Օմէնթօ:

### ՈՐՀ, ԵՐԹԱՍ ԲԱՐԵԱՒԻ

Ամենախորին հաւով եւ սգահար սրտիւ դժբախտութիւնը ունինք գուժելու մեր թշուառ ընթերցողներուն թէ Տ. Յակօբ Ազգուրեան յուլիս 6ին, ուրբաթ օր, Մէսածըռի Մառիթիմ ընկերութեան Բժնիչօ շողենաւով (4500 թժնօ. 12000 ձիու գորութիւն, նաւապիւս՝ պ. Ժիւլ Կրամ) կէսօրէ վերջ ժամը 4ին կը մեկնի քաղաքէս զէպի Մառսէյլ ուր նոյն ամսոյն 11ին չորեքշաբթի առաւօտ ժամը 10ին հասնելով, ուղղակի պիտի իջնանի Օթէլ Տիւ Լուվր, Տ. Ազգուրեան երևք օր պիտի մնայ Մառսէյլ եւ պիտի այցելէ զաղթային Կուսահանդէսը եւ ներկայ պիտի գտնուի Գամպոնճի Սիսովաթ թագաւորին ընկերացող պարուհիներու ծայրագոյն արեւելեան խաղերուն: Յետոյ պիտի մեկնի Քոնթրէքսէվիլ, ուր պիտի օթեւանի Կոան Օթէլ Տէ Պէն եւ պիտի հետեւի, ըստ մասնագէտներու խորհրդի, յատուկ դարմանումի մը: Համակրելի հիւանդը ամիս մը Քոնթրէքսէվիլ մնալէ ետքը, պիտի երթայ Բարիզ եւ պիտի իջնէ Կառ Սէն Լազարի մօտ, Կրան Օթէլ Թէրմինիւս, յետոյ . . .

(Շարունակելի)

## ՔԱՆԻ ՄԸ ԼՈՒՐԵՐ

Քեր. Առաջնորդ Հայրը չորեքշաբթի օր անպաշտօն կերպով ի նիստ հրաւիրած է նորընտիր Երեսփոխանական ժողովի Եւրոպա չմեկնող անդամները: Անդամները անպաշտօն կերպով եկած են ժամը 5ին Առաջնորդարան եւ ժամի մը չափ անպաշտօն խորհրդակցութիւն մը կատարելով մեկնած են:

Պատճառներ ունինք հաւատալու որ այդ խորհրդակցութիւնը որ եւ է գրական արդիւնքի մը չէ յանգած եւ թէ կայութիւնը կը մնայ նոյն անորոշ գրութեան մէջ:

---

Տ. Սմբատ Բիւրատ արձակուրդին լրանալէն վերջ կրկին գպրոցական տնօրէնի պաշտօնը իրեն համար կատկածելի եւ խիստ թէական նկատելով, այժմէն իսկ Ապու Տարտար փողօ ը խանութ մը վարձելով զայն վերածած է գրաշարական քօլէժի մը ուր արդէն 12ի չափ աշակերտներ սկսած են յաճախել, փիւնիկեան տառերով գրաշարութիւն ուսանելու համար:

Աոյն քօլէժի պատուակալ հոգաբարձութիւնը անձնուիրաբար ընդունած է Տ. Աստուր պէյ Շէրիտճեան:

---

Տ. Յակոբ Ուղուրեան Եւրոպա մեկնելուն առթիւ իր վարած կարգ մը պաշտօններուն համար իրեն նման կարող եւ փորձառու անձնաւորութիւն մը կը փնտռուի:

Փափաքողները կրնան զիմել ամէն օր, ժամը 4էն մինչեւ 5, ուր որ անկ է:

---

Հայկական ընդհանուր անհամաձայնութեան Միութիւն մը կազմելու համար Տ. Յ. Շնորհքեանի նա-

խածեանութեամբ նախնական խորհրդակցութիւններ սկսած են կատարուիլ Ալեքսանդրիոյ մէջ :

Սոյն Միութեան նպատակն է օրինաւոր կամ ապօրէն միջոցներով խոչնդոտ ըլլալ որ եւ է ազգային գործունէութեան մը ի զլուի հանման: Հանրապէս Հայկական Բարնգործական Ընդհանուր Միութեան տոսներորդ յօշուածի արամայրութեան՝ այս նոր Միութեան պիտի մասնակցին նաեւ յեղափոխականները, եւ որպէսզի ընկերութեան նպատակը յաջողութեամբ իրագործուի, հաւասար թիւով Հնչակեաններ եւ Գաշնակյակեաններ պիտի գտնուին մէջը :

### ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Կը խնդրենք արտասահմանի այն թերթերէն եւ հանդէսներէն որոնց «Ազատ Խօսք» կ'ուղարկենք որպէսզի հաճին իրենց թերթերը փոխանակել: Մինչև հիմակ Իազմավէպ. Հանդէս Ամսօրեայ, Արմէնիա եւ Սափրիչ միայն մեզ զրկած են իրենց թերթերը, իսկ միւս հանդէսներն ու թերթերը չենք զիտէր ի՞նչ պատճառաւ չեն փոխանակած :

Առ Տ. Ա. Մ.-- Զուտ լրատու օրաթերթի մը հըրատարակման գաղափարը արդէն ունեցած ենք եւ նոյնիսկ քիչ առնէն իրագործելու մասին միջոցներ ալ կը խորհինք: Յաջորդ շարթու «Ազատ Խօսք»ին մէջ այդ նկատմամբ պիտի խօսինք: Կանխապէս շնորհակալ ենք ձեր խոստացած աջակցութենէն:

Մեր բաժանորդներուն.-- Այս թիւով կը լրանայ «Ազատ Խօսք»ի քառորդ շրջանը. մասնաւորապէս կը խնդրենք զաւտօրի մեր բաժանորդներէն որ հաճին ի-

քենց բաժնեկիր մեզ զրկել անյապազ: Թերթին մինչեւ այսօր կանոնաւոր հրատարակումը կարծենք մեզ քրաւունք կուտայ բաժանորդներէն խնդրելու որ իրենք ալ կանոնաւոր ըլլան իրենց վճարումներուն մէջ:

Առ Տ. Մ. Գ.-- Ձեր որոշ հասցէն իմացուցէք տրպէսզի կարենանք թերթ զրկել. նամակին մէջ ոչ քաղաքի անուն կայ եւ ոչ ալ երկրի. նամակագրօջմէն կրցանք գուշակել թէ Յունաստանէն կուգար:

«ԱԶԱՏ ԽՕՄԲ» Ձեռքի կը ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով և Շէրիֆ փաշա լրագրավաճառ Տ. Թեղլալեանի խանութը:

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլաշն Բէռլին քով և «Լուսարեք» թերթի գրուիչին մօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կըրկին գինով:

**New Victoria Hotel** ՍՍՆ ՍԹԷՖԱՆՆՕ

ՆՈՐ ՎԻՔՏՈՐԻԱ ՕՍԷԼ Ալեքսանդրիոյ Մօտ

ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱՄ Հալթ թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելքերը՝ րական լոյս: ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆ: Թելեֆօն թիւ 370: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոմսվայով տասը վայրկեան Ալեքսանդրիայէն:

Ս. Ֆ. ՌԷՉԻԿ, ՏԵՕՐԷՆ

Յ. Գ.-- Մասնաւոր գին կառավարական պաշտօնեաներու և զինուորականներու համար: Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային:

# Մ Ե Ծ Ա Չ Խ Ա Տ Ա Ն Ո Ց

ՓՈՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Գ. Ն Ա Չ Ա Ր Է Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Թ Ա Յ Թ Ի Չ

Մասային եւ Տէրտի երկարդ, վարչութեանց. եւն. եւն.

15 RUE STAMBOUL 15

ALEXANDRIE, Egypte

Այս աշխատանոցին մէջ կը պատրաստուին Պը-  
զինձէ և Երէզէ դուստի Բլաքներ, Քաուչուէ, Պզինձէ,  
Պողպատէ կնիքներ, արծաթէ և ոսկիէ մոնտիրամներ,  
թամբիօններ, ևն. Չինիօկրափիի և կալվանօրլասթիի  
վերաբերեալ գործեր:

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և օտար  
լեզուներով: Հարսանեկան հրաւիրապիքն իր, այցա-  
քարանել, նամակազլուխներ, ստացազիրներ, հասկե-  
քարաներ, մահազգներ, հայերէն պրոչիւրներ, գիրքեր ևն:

Մասնաւոր խնամք ձաշակի և մաքրութեան: Չա-  
փաւոր գին:

Այս աշխատանոցը ջերմապէս կը յանձնարարենք  
Ազգեսանդրիոյ, Գահիրէի և բոլոր եղիպտահայ ազ-  
գայնոց, վստահեցնելով թէ հոն եղած բոլոր յանձնա-  
րարութիւնները ամենամեծ խնամքով կը կատար-  
ուին և գոհ կը ձգեն ամէնէն զժուարահաճ ձա-  
շակները:

Օտար գործատուներու զիմելէ առաջ հաճեցէք  
անգամ մը այցելել սոյն աշխատանոցը:

Պատասխանատու-Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպար. փոքր. Գ. Ն Ա Չ Ա Ր Է Թ Ե Ա Ն, Ազգեսանդրիա.